ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հոկտեմբերի 2024 թվականի N 1568-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 2102-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Պետական գույքի կառավարման ոլորտում Հայաստանի Հանրապետության անունից կնքված գործարքներով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու և պետական գույքի գրավադրման պայմանները սահմանելու մասին» N 2102-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 22-րդ կետերի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի և

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.».

2) որոշման 5-րդ կետում՝

ա. 5-րդ ենթակետի վերջում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ ենթակետով՝

«6) գրավի պայմանագրում նախատեսել, որ գնորդը գրավ դրված գույքը բավարար հիմնավորման դեպքում կարող է փոխարինել չկատարված պարտավորություններին համարժեք բանկային երաշխիքով՝ կոմիտեի համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ: Ընդ որում, երաշխիքով սահմանված գումարը պետք է վճարվի պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետներում: Գրավ դրված գույքի նկատմամբ իրավունքների դադարման պետական գրանցումը կատարվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով սահմանված կարգով:».

3) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին կետով՝

«5.1. Հաստատել պետական գույքի առուվաճառքի պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:».

4) որոշումը լրացնել N 2 հավելվածով՝ համաձայն հավելվածի.

5) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝

ա. 17-րդ կետը «գրավադրումից» բառից հետո լրացնել «(եթե առկա չէ բանկային երաշխիք)» բառերով,

բ. 19-րդ կետը «գրավադրումից» բառից հետո լրացնել «(եթե առկա չէ բանկային երաշխիք)» բառերով:

2. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջը տարածվում է նաև մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կնքված և դեռևս չավարտված պետական գույքի առուվաճառքի և օգտագործման պայմանագրերի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

03.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ